

# ԱԷՏՄԵՐ




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՍԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1896

ԹԻՒ 7



Ինչպէս կայնեցաւ այն բլուրին վրայ  
 և լացաւ իր սիրելի Երուսաղեմին բնա-  
 կիչներուն վրայ, երբ դէպ ի այն ժո-  
 ղովուրդն իր սիրով յի մեծ սրտով  
 ըսաւ, “Ո՛վ Երուսաղէմ, Երուսաղէմ,  
 որ մարգարէները կը սպաննէիր, ու  
 քեզի խրկուածները կը քարկոծէիր,  
 քանի՛ անգամ քու տղաքներդ ժող-  
 վել ուզեցի՛ ինչպէս որ հաւը իր ձա-  
 գերը թևերուն տակը կը ժողվէ, և  
 դու ք չուզեցիր,” և երբ յարեց նաև,  
 “Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի  
 մնայ,” չենք կրնար երբեք երևակայել  
 անոր վշտի բեռը:

Երբ բազմութիւնը յնծութեան մէջ  
 էր, և արմաւենիի ոստեր կը տարա-  
 ծէին ճամբուն վրայ, և կ'աղաղակէին,  
 “Ո՛վսաննա, Որդւոյ Դաւթի, օրհնեալ  
 է առ թագաւորը որ Տէրօջը անունովը  
 կու գայ,” իր սիրտը սաստիկ վիշտով  
 լեցուն էր, վասն զի գիտէր թէ անոնց  
 մէջ չկար մէկը որ բաւական քաջու-  
 թիւն ունենար իր քով կայնելու բա-  
 րեկամութեամբ և սիրով իր փորձու-  
 թիւններու ժամուն մէջ որ շատ  
 մօտ էր:

Մեր Տէրը իր մարգարէական աչ-  
 քով կը տեսներ թէ քիչ ետքը այդ  
 պարիսպներէն դուրս պիտի հանուէր  
 խաչուելու համար: Բայց իրեն ամե-  
 նէն մեծ վիշտ սուտոյն էր նայիլը բո-  
 լոր ապագայ դարերուն վրայ, և տես-  
 նելը թէ իր որդւոցմէ բազմութիւն-  
 ներ, մեծ և փոքր, անհնազանդ  
 պիտի գտնուէին իր սուրբ կամբին:  
 Կը տեսներ անոնց սիրտերուն ապա-  
 կանուիլը չար խորհուրդներով, բե-  
 ռաններուն ապականուիլը չար խօսքե-  
 րով, ձեռքերուն ապականուիլը չար  
 գործերով, և ոտքերուն ապականուի-  
 լը չար ճամբաներ քալելով:

Մինչ կը նայէինք այս պարիսպնե-  
 րուն վրայ, որ շինուած են այն տեղը  
 որուն վրայ մեր Տէրը նայեցաւ, մեր

**ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ԱՌՋԵՒՍ**


Ասկէ տասներկու տարի առաջ կի-  
 րակի առաւօտ մը քանի մը բարեկամ  
 ներու հետ կը պտըտէի Երուսաղեմի  
 պարիսպներուն բոլորտիքը: Հանգչե-

լու համար նստանք Չիթենեաց լեռան  
 ստորոտը և կը նայէինք մեր առջև  
 գտնուող պարիսպներուն վրայ, միտք  
 բերելով այն ժամանակը երբ մեր ա-  
 մենօրհնեալ Տէրը Բեթանիայէ այն  
 բլուրն եկաւ: Միտք կը բերէինք թէ

սիրտերը ազոթքով վեր ուղղուեցան Անոր որպէս զի ինքը ներէ իր գաւակներուն և անոնց սիրտերը յօժարեցնէ խնդրելու ներում և պաշտպանութիւն իր յաւիտենական սիրոյ թիւնրուն ներքև :

բնակիչներով և ոգևորեալ կեանքով Յետոյ մարդուս խորհուրդները ետ կ'երթան այն օրերուն երբ վեհով կը նայէր երկու ուրիշ քաղաքներու , Հէրքուլանումի և Փոմփէլիի , վրայ , ուրոյ բնակիչները այնքան բազմաթիւ և

Պեղումները որոնք յիշեալ քաղաքին թաղուեղէն և մուցուեղէն 1,600 տարի ետքը սկսան, շատ մը բաներ կը սորվեցընեն : Անոնց երկուքը յիշենք հոս . Մարդ մը երբ վեհով գորս կ'արձակէր քաւեր , կրակ և մոխիր , ետ վազեց առնելու համար իր ոսկիները , որոնց ծանրութիւնն այնքան մեծ էր որ անոնց ներքև ճնշուեցաւ մնաց : Ընդհակառակն Հռոմայեցի պահանջողը ( Գրուել Կէլսէրէի ) մինչև վերջը հաւատարիմ մնալով կեցաւ իր տեղը , և կու տայ մեզի հաւատարմութեան օրինակ : Երբ իր գլխին վերև կրակ կը տեղար և ժողովուրդը ամէն կողմ կը վազէր , միթէ ինքն ալ չփորձուեցաւ տեղը թողուլ և մէկդի վազելու : Անոր երեսը շատ զօրաւոր և սակայն տխուր է : Վերջին վայրկեաններուն մէջ իր միտքն եկած ըլլալու է թէ իր մայրը կամ կինը կամ մանուկը հեռին , ի Հռոմ իրենց տանը մէջ , ապահով կը գտնուէր , բայց պարտականութեան ձայնը աւելի բարձր և աւելի ազդու էր իրեն համար : Եւ միթէ կրնամ կատարել իր պարտականութիւնը եթէ հաւատարիմ չըլլար անցեալին բոլոր մանր պարտականութիւններուն մէջ : Այո , այն ատեն միայն կրնայ պարտականութեան զգացումը բաւական զօրաւոր ըլլալ և այն ատեն միայն կրնայ մարդ իր տեղը կենալ մինչև ի մահ : Թէպէտ նա էր հասարակ պահանջող մը որ ասկէ 1,800 տարիէն աւելի առաջ Հռոմէական փոքր քաղաքի մը մէջ ապրեցաւ , չը կրնար ներշնչել մեզ այսօր : Որ և իցէ մէկը որ կը տեսնէ բուն նկարը որմէ օրինակուած է այս պատկերը , անշուշտ աւելի զօրաւոր կ'ըլլայ փորձութեան , վշտի և տառապանքներու մէջ՝ միտք բերելով այդ դէմքը , և անոր սորվեցուցած խրատը . «Պարտականութեան տեղին վրայ ուրիշ բանի հոգ չտանինք , բայց միայն հաւատարիմ ըլլալու :»



**ՀՈՒՄԱՅԵՑԻ ՊԱՀԱՆՈՐԻԸ**  
Դէպ ի իտալիոյ կապոյտ երկիրքը բարձրացած վեհով լեռան երևոյթը , մարդուս շատ մը խորհուրդներ կը թելադրէ : Նախ , թերևս կը թելադրէ գեղեցիկ տեսարանը որուն վրայ վեհով կը նայի այսօր . Նափոյի շրոջը և Նափոյի քաղաքը իր բազմաթիւ

կեանքը այնքան ոգևորեալէր Գրիստոսի աշխարհ գալէն առաջ , որքան է այսօր Նափոյի , 2,000 տարի ետքը : Փոմփէլի աւելի շահեկան է քան Հէրքուլանում , վասն զի անոր բնակիչներէն շատը մեզի ծանօթացած են նկարիչներու վրէժինին և պատմադիրներու գրիչին միջոցաւ :

**ԼՈՅՍԻՆ ԴԱՐՁԻՐ**

Հիւանդի սենեակի մը պատուհանը դուռած թաղարի մը մէջ վարդի փոքրիկ տունկ մը կար : Տունկին վրայ մէկ վարդ միայն կը գտնուէր , որուն երեսը միշտ լոյսին կը դառնար : Այս բանը ուշադրութիւն գրաւեց և փրան խօսուեցաւ : Մէկը ըսաւ թէ վարդը

լոյսէն զատ ուրիշ տեղ չնայիր: Փորձեր կատարուեցան փրան. պատուհանէն անդին, սենեակին ներքի կողմը մութին կը դարձնէին երեսը, բայց քիչ ժամանակէն նորէն տալի դիրքին կը դառնար: Զարմանալի յամառութեամբ կը մերժէր երեսը մութին կողմը պահել, և միշտ լոյսին նայել կ'ուզէր:

Այս վարդէն կրնանք դաս մը սորվիլ: Մենք երբեք թող տալու չենք մեր անձերուն՝ կեանքիս ցաւերուն նայիլ. երբեք պէտք չէ որ նախնք տրտմութեան մութին մէջ, պէտք չէ որ լոյսը մթնայ մեր վրայ և յուսահատութեան ու արտութեան փոխուի. պէտք է որ մեր երեսները լոյսին դարձնենք, և մեր բոլոր կարողութիւնը և կորովը գործածենք աւելի քաջութեամբ կատարելու մեր պարտականութիւնները և աւելի հաւատարմութեամբ և սրբութեամբ ծառայութիւն մատուցանելու:

ՃՈՆ ՈՒԻՔԼԻՖ

Ճոն Ուիքլիֆ Բարեկարգութեան Անգղիացի մեծ քարոզիչն էր: Մեծ նիւթերէն մին որուն վրայ շարունակ կը քարոզէր, սա էր, «Սուրբ ըլլալու համար մարդիկ, ով ալ ըլլան, քահանայ կամ ժողովուրդ, պէտք է որ ուղիղ կեանք վարեն»: Նաև յաճախ կը խօսէր կղերին, այսինքն՝ եկեղեցականներուն, տգիտութեանը դէմ և կը պնդէր որ ժողովուրդը անխտիր կարգայ Աստուածաշունչը:

Այդ ժամանակի կղերը հասարակ ժողովուրդին դաստիարակութեան կը հակառակէր: Եւ իրաւ որ այդ ատենները մարդոց միտքերը և խիղճերը ազատ չէին:

Ուիքլիֆի վարդապետութիւնները գարշելի համարուելով, ինքը եպիսկոպոսներու ատենը հրաժարուեցաւ և դատապարտուեցաւ: Եպիսկոպոսները անոր վրայով իմացուցին Պապին, որ Հռոմ կանչեց զանիկա: Բայց Ուիքլիֆ չզնայ Հռոմ, վասն զի երկու Պապեր կային, մէկը Հռոմ և միւսը՝ Գաղղիոյ Ալիքսանդր քաղաքը: Անգղիա մնաց և սովորաբար կը քարոզէր Լըթըրուրթի բեմէն, բայց երբեմն ալ կը քարոզէր Լոնտոնի փողոցներուն մէջ կանգնուած բեմերէ: Կիրակի օրեր ճշմարտութեան ունկնդիրներու մեծ բազմութիւն մը կ'ունենար. իսկ շաբթու մէջ սաստիկ կ'աշխատէր գիրք մը թարգմանելու Լատիներէնէ Անգղիերէնի: Գիտէք, ի՞նչ գիրք էր անոր թարգմանած գիրքը: Այն գիրքն

էր զոր աշխարհի մէջ ամենէն պատուականը կը համարինք — Աստուածաշունչը: Հինգ հարիւր տարիներ առաջ այս պատուական Գիրքը չէր կարդացուեր ինչպէս հիմա կը կարդացուի բոլոր անգղիական ժողովուրդներէն: Այդ ատեն Աստուածաշունչը կը գրանուէր միայն համալսարաններու գրքատուններուն և քանի մը եկեղեցիներու մէջ: Եւ այս քանի մը հատը Լատիներէն և եբրայեցերէն լեզուներով և մագաղաթի վրայ գրուած էին: Հազիւ տասը հազարէն մէկ անձ երբեք կարդացած էր Աստուածաշունչը:

Անգղիացի ժողովուրդը Ուիքլիֆի

հիւ, կը սկսին յառաջդիմել: Անոնք գիտութիւն կը ստանային, և թէ՛ էրիկ մարդիկ թէ՛ կին մարդիկ, որոնք այրուէնին զիրեն անգամ չէին ճանչնար, կարդալ սորվեցան: Այսպէս Աստուածաշունչին ժողովրդին ներկայացուելովը նոր կեանքի մը և իրերու նոր կարգի մը սկիզբն եղաւ Անգղիոյ մէջ:

ՏՂԱՆ ԵՒ ԳԱՅԼԸ


Հովիւ տղայ մը որ իր հօրը ոչխարները կ'արածէր, զուարճանալու համար երբեմն կը պոռար, «Գայլը, գայլը» Մարդիկ անոր ձայնը լսելով իրենց դաշտերու գործերը կը ձգէին և օգնութեան կը վազէին: Երբ կու գային և գայլ չէին գտներ հոն, «Օր մը այդ բանին համար պիտի ցաւիս», կ'ըսէին: Բայց տղան անոնց վրայ կը խնդար միայն, և կը մտածէր թէ ըրածը աղուոր կատակ էր: Երկու երեք անգամ ըրաւ այս կատակը. վերջը երբ ուրիշ անգամ կը լսէին անոր այդպիսի աղաղակները, «Գայլ չկայ հոն», կ'ըսէին և իրենց գործերուն կը նայէին:

Բայց օր մը գայլը իրօք եկաւ: Այն ատեն տղան պոռաց անկեղծօրէն, «Գայլը, գայլը: Եկէք, օգնեցէք ինձի»:

«Ինչու չէք երթար և օգնելու աղին», ըսաւ այն կողմէն անցնող մարդ մը: «Ո՛հ», ըսին արտի մարդիկը, «տղան ըրածը խաբէութիւն է միայն, ինչպէս ըրած է ասկէ առաջ: Եթէ երթանք, մեր վրայ պիտի ինդայ: Իր ոչխարները վտանգի մէջ չեն, բոլորովին ապահով են»:

Շուտով վազելով եկաւ տղան և աղաչեց մարդոցը որ երթային: «Ահա գայլը բոլոր ոչխարները կը սպաննէ», ըսաւ: Բայց մարդիկը խնդացին անոր վրայ, և չգային օգնել: Անոնք առաջ լսած էին անոր այդպիսի խօսքերը:


Երբ հասկցուեցաւ թէ իրօք գայլ մը եկած և ոչխարները սպաննած էր, տղին հայրը ըսաւ անոր թէ յանցանքն իրն էր: «Սորովէ ասկէ», ըսաւ, «որ երբ մէկուն անունը ստախօս ելլէ, իր ճշմարիտ խօսածին ալ չեն հաւատար մարդիկ»:



ՈՒԻՔԼԻՖԻ ԲԵՐԸ Ի ԼԵԹԵՐՈՒԵՐԹՆԷ

չնորհակալ ըլլալու մեծ պարտականութիւն ունի, անոր այս գիրքը իրենց խօսած լեզուին թարգմանելուն համար: Շատ ուրիշ քարոզիչներ ալ սկսած էին համոզուիլ թէ հասարակ ժողովուրդը իրաւունք ունի Աստուծոյ խօսքը կարդալու. և գրադիրներ կը գործածուէին թարգմանութիւնն օրինակելու համար: Այս թարգմանութիւնները շրջապով գրասերներուն կցուած էին եկեղեցիներուն մէջ, ուր ամէն մարդ արտօնութիւն ունէր կարդալու, բայց մէկը չէր կրնար աւանդ ուրիշ տեղ տանիլ զանոնք:

Ժողովուրդը զարմանքով և բերկրութեամբ կ'ունկնդրէր երբ Սուրբ Գիրքը կը կարդացուէր: Մարդիկ սկսան խորհիլ. և երբ մարդիկ կը սկսին խոր-



Ո՛վ ՍՊԱՆՆԵՑ ԴԵՂՁԱՆԻԿԸ

«Կ'իմանամ թէ այդ կատուի ձագը մեծ նեղութեան մէջ է,» ըսաւ տան ծեր շունը կատուի մը որ դրան սեւ մին վրայ կը պառկէր: «Իրա՛ւ,» ըսաւ կատուն լրջօրէն, «ի՛նչ ունի:» «Չլսեցիք,» ըսաւ շունը: «Կ'ըսեն թէ դեղձանիկն սպաննած է, բայց ես չեմ հաւատար:» «Ինչո՛ւ չէք հաւատար, ես երբեք չեմ զարմանար,» ըսաւ կատուն: «Իրա՛ւ չէք զարմանար, տիկին: Բայց ինձի շատ զարմանալի է:» «Ինչո՛ւ,» ըսաւ կատուն իր գլուխը մէկդի դարձնելով: «Մէկ երկու պատճառներ ունիմ, տիկին. նախ՝ որ նա այնչափ մեծցած չէ որ կարող ըլլայ վանդակին բարձրութեանը չափ վեր ցատկելու:» «Եթէ այդ կ'ըսէք, ես ասոր երկու անգամը բարձր կը ցատկէի ասոր տարիքը եղած ժամանակս:» «Իրա՛ւ, տիկին. այդպէս մ'ըսէք:» «Բայց հարկաւ, հիմա կարող չեմ ցատկել, ըսաւ կատուն աճապարանօք, երբ տեսաւ որ շունը իր վրայ անկած էր աչուքները: «Չեմ կարծեր, տիկին: Կը տեսնէք որ երկուքս ալ տարիքնիս կ'առնենք, և կը համարձակիմ ըսել թէ դուք ալ ինձ նման սկսած էք զգալ թէ ձեր յօդուածները քիչ մը կարծրացած են:» «Չէ, չէ, ես այդպէս չեմ,» ըսաւ կատուն, բարկութենէն մտրթին մազերը տնկելով և պոչն ուռեցնելով: «Ինչո՛ւ կը նեղանաք, տիկին,» ըսաւ շունը: «Կարծեցի թէ հասկցաք որ ես ըսել ուզեցի թէ չէք կրնար ցատկել: Այո, չափ:» «Ալ չեմ կրնար,» ըսաւ կատուն, «բայց այդ բոլորովին տարբեր բան է: Ես հիմա ալ չեմ ցատկեր, վասն զի տեսայ որ վրաս չի նար:» «Կը հասկնամ, տիկին, բայց մենք կատուի ձագին վրայ կը խօսէինք: Գիտեմ որ խեղճ լաւ ծեծ մը կերաւ. խեղճ ձագուկ: Ես կ'ուզեմ հասկնալ թէ ծեծն ո՛վ ուտելու էր:» «Ո՛հ, ես երբեք չեմ խառնուիր ուրիշներու գործին,» ըսաւ կատուն անտարբերութեամբ: «Իմաստ ո՛ն կանոն, տիկին, ընդհանրապէս, բայց կան ժամանակներ երբ — Ներեցէք, բայց ձեր քթին ծայրի այդ դեղին փետո՛ւրը ինչ պիտի ըլլայ: Ես այսպէս խորհեցայ — ներեցէք —» բայց կատուն պոչին ծայրը պատին վրայ էր դեռ շան խօսքը չաւարտած: «Ո՛վ թէ այսպիսի գէշ կերպով ցատկելու է ծերունի տիկին մը որ պարտաւորուած է հրաժարիլ ցատկելէ, վասն զի վրան չի նար,» ըսաւ

շունը, մտախորհ անոր ետեւէն նստելով: Ես շատ չսխալեցայ, կարծեմ, և ինձի կու գայ թէ ինք և ես գիտենք թէ ո՛վ ուտելու էր ծեծը:»

ԿՈՅՐ ԺԱՄԱԳՈՐԾԸ

Ուիլիամ Բիփին ժամագործ մըն էր Անգլիոյ մէջ: Իր արհեստին սխեմէն երեք չորս տարի ետքը աչքերէն պաղ առաւ, և քսանըութ տարեկան եղած ատենը կուրցաւ: Կուրնարուն համար գանգատեցա՛ւ, տրտնջեց, ոչ երբեք Առանց յապաղելու սկսաւ կարծես թէ նորէն սորվիլ իր արհեստը, և շուտով այնչափ ճարտար ժամագործ մը եղաւ որչափ առաջ: Ժամացոյցներ կը սրբէր և կը նորոգէր, երաժշտական գործիքներու և ուրիշ բաներու նորոգութիւններ կ'ընէր այնպիսի խելքով և ճարտարութեամբ որ մարդուս հաւտալը չգար: Միակ օգնութիւնը որուն պէտք ունէր նա ժամացոյցը քակելու և կտորները իրար բերելու համար, նուրբ զսպանակը քակելու և հաստատելու գործն էր, զոր աչազուրկ անձ մը չէր կրնար ընել, բայց զոր իր կնոջ սորվեցուց ընել իրեն տեղը: Շատ անգամ հարիւր ժամացոյց մէկէն իր խանութը կը սպասէին նորագուելու համար. անոնցմէ շատերը հարիւրէ մինչև երկու հարիւր մղոն հեռաւոր տեղերէ կու գային: Դպչելով մը կը ճանչնար ամէն մէկ ժամացոյցը, և ճայնէն կը ճանչնար ամէն մէկ յաճախորդը: Ուիլիամ Բիփին մտացի, գեղեցիկ, երկայնահասակ և նշանաւոր կերպարանքով անձ մըն էր, և շատեր որ հետը կը խօսէին, չէին գիտեր թէ կոյր էր: Եւ իրօք դուրս գալն մըն էր այս կոյր Ուիլիամ Բիփինը, վասն զի իր գործը իր ձեռքով և իր բոլոր կարողութեամբ կ'ընէր:

ԲԱՑՈՒԱԾ ԱԶԳԸ

Տասնըվեց տարեկանի չափ աղջիկ մը որչափ որ ինքզինք գիտէր՝ աչքերուն մէջ բիծ ունէր որուն համար չէր կրնար աղէկ տեսնել: Վերջապէս որոշուեցաւ կատարել վիրաբուժական գործողութիւն մը որ յաջողութեամբ ի գործ դրուեցաւ: Աղջիկը տան մէջ պահուեցաւ մինչև որ աչքերը լաւ զօրութիւն ստացան, և ըսուեցաւ որ քիչ քիչ դուրս ելլէ տնէն: Այնպէս պատահեցաւ որ բաւական ատեն ետքը անգամ մը բայց օգն ելաւ իրիկունը մթնեղէն ետքը: Այդ իրիկունը աղջիկը

հիւրանոց վաղեց դէմքը պայծառացած: Մեծ գիւտ մը ընողի բերկրութիւնը ունէր:

«Ո՛հ, եկէք,» աղաղակեց, «չուտ եկէք հոս, տեսէք ի՛նչ գեղեցիկ բաներ կ'երևան երկինքին երեսը:»

Բարեկամները արտօնօք անոր հետեւեցան և դռնէն դուրս ելան, և կը խորհէին թէ արդեօք ի՛նչ պատահած էր: Բայց անսովոր բան մը չտեսան:

«Ի՛նչ ըսել կ'ուզես,» հարցուցին անոր: «Տեսէք,» ըսաւ աղջիկը եռանդով երկինքը ցուցնելով, «չէք տեսներ վերի այդ պայծառ բաները, Ահա, ահա, և բոլոր երկինքին երեսը կը փայլիլան:»

«Միրելի աղջիկս,» ըսաւ մէկը, «անոնք աստղերն են:» Այո, աստղերը, որոնք չէր տեսած առաջ: Բարեկամները գրեթէ չէին հասկնար թէ այդ աղջիկը իր բոլոր կեանքին մէջ շարժած էր պտըտած էր Աստուծոյ աշխարհին մէջ բայց սահմանաւոր էր իր տեսութիւնը, միայն իրեն շուրջը շատ մօտ գտնուած բաները կը տեսնէր, և բոլորովին անտեղեակ էր թէ աստղեր կային, աստղերու բազմութիւններ՝ բոլոր երկինքին երեսը, և ամէնքն ալ այնքան գեղեցիկ: Միւսներուն ի՛նչ տարօրինակ կ'երևէին աղջկան խօսքերը:

Բայց ես շատ մը աւելի տարօրինակ և զարմանալի բանի մը վրայ կը մտածեմ, այո, նաև ցաւալի բանի մը վրայ: Ո՛վ մարդկային հոգիներ, երկինքը լեցուն է փայլող լոյսերով ուրոնք Աստուած կախած է հրապուրիչ ընելու համար իր յաւիտենական տունը, ձեր ուշադրութիւնը քայելու համար դէպի վեր, ցուցնելու համար թէ յաւիտենականութիւնը ժամանակէն ո՛րչափ աւելի գերազանց է գեղեցիկութեամբ, թէ երկինքը երկրէս ո՛րչափ բարձր է արժանիքով և փառքով: Եւ սակայն, ով բարեկամներ, ձեր աչքերը տակաւին բռնուած են: Չէք տեսներ, չէք ըմբռներ, չէք հասկնար: Ո՛հ, երանի՛ թէ անոր ձեռքը որ բացաւ կոյրին աչքերը երբ աշխարհի վրայ կը պտըտէր, դպչէր ձեր հագիներուն, և տեսնել տար ձեզի այն իրականութիւնները:

Ամերիկայի Միտենարայ  
Արամուստեր  
Տնօրէն—Խմբագիր  
Ֆինանսներու Եղբայրներ  
ԿՈՍՏԱՆԴՆՍ  
Ի ՅԱՐԱՐՈՒ Ա. ԿՈՍՏԱՆԴՆՍ